600.0166.17.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2017 թվականի №166Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի №269Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2017 թվականի ապրիլի 27-ին «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №269Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0551 լիցենզիայով (այսուհետ՝ №0551 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկու տարի ժամկետով, քանի որ Ընկերությունը ֆինանսական խնդիրների պատճառով դեռևս չի սկսել շինարարական աշխատանքները,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №432Ա որոշմամբ №0551 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել էր մեկ տարի հինգ ամիս ժամկետով, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել №0551 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը մեկ տարի հինգ ամիս ժամկետով՝ Որոշման մեջ «2017 թվականի մայիսի 29-ը» բառերը փոխարինելով «2018 թվականի հոկտեմբերի 29-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0551 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2016 թվականի փետրվարի 11-ի №265 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ գումարից վեց հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 13-ը գործողության ժամկետով:

3. «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 29-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
17 մայիսի 2017թ.